ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ՀՀՎԱ-ԷԱՃԱՇՁԲ-23/50 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«12» «ապրիլի» 2023թ., ժամը՝ 11:00**

Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ծրագրերի իրականացման և մշտադիտարկման վարչության ծրագրերի իրականացման բաժնի պետ՝ Աննա Միերյան

Հանձնաժողովի անդամներ՝

Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ծրագրերի իրականացման և մշտադիտարկման վարչության ծրագրերի մշտադիտարկման բաժնի պետ՝ Գրետա Մնացականյան

Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ծրագրերի իրականացման և մշտադիտարկման վարչության ծրագրերի իրականացման բաժնի ավագ մասնագետ՝ Նվեր Տիգրանյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

---

1. «ՀՀՎԱ-ԷԱՃԱՇՁԲ-23/50» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի վերաբերյալ

1.1 «ՀՀՎԱ-ԷԱՃԱՇՁԲ-23/50» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2023թ. ապրիլի 10-ը ժամը 12:00-ն: Հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2023թ. ապրիլի 11-ին ժամը 12:00-13:00-ն՝ **eauction.armeps.am** համակարգի միջոցով:

1.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	Հեռախոս	ՀՎՀՀ
1	Աննա Սահակյան ԱՁ	+37477447754	25405638
2	Դիջի Պրինտ ՍՊԸ	+37493687747	01280885
3	Պրինտարմ ՍՊԸ	+37491402586	01278508
4	Կոլլաժ ՍՊԸ	+37410520217	02547585
5	ՎՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	+37491485878	06949526

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

2. Տեղեկատվություն հարցումների և պատասխանների վերաբերյալ

2.1 Հարցումներ չեն կատարվել և պարզաբանումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

3. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտի և հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.**

3.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3.2 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես.

3.2.1 1-ին, 4-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով «Աննա Սահակյան» ԱՁ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության երրորդ պարբերության մեջ բացակայում է էլեկտրոնային փոստի հասցեն, իսկ չորրորդ պարբերության 1)-ին ենթակետը չի համապատասխանում հրավերի պահանջներին /բացակայում է «իրեն փոխկապակցված անձինք» արտահայտությունը/:

3.2.2 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով «Դիջի Պրինտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության երրորդ պարբերության մեջ բացակայում է էլեկտրոնային փոստի հասցեն, իսկ չորրորդ պարբերության 1)-ին ենթակետը չի համապատասխանում հրավերի պահանջներին /բացակայում է «իրեն փոխկապակցված անձինք» արտահայտությունը/, ինչպես նաև իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը /հրավերի հավելված 1.3-ը/՝ կայքէջի հղումը բացակայում է:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

4. **«ՀՀՎԱ-ԷԱՃԱՇՁԲ-23/50» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին**

<u>Գնահատող հանձնաժողովը որոշեց</u>

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և ծանուցել մասնակիցներին, որպեսզի մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկեն նշված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2023 թվականի ապրիլի 14-ին, ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 1, 226 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Հանձնաժողովի Նախագահ՝	Աննա Միերյան	
Անդամներ՝	Գրետա Մնացականյան	
	Նվեր Տիգրանյան	
Քարտուղար՝	Սոնա Շիրինյան	